ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ-ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N <<ՀՀՔԿ-ՄԱԾՁԲ-ՄՎ-21/1>>

ք. Երևան «10» մայիսի 2021թ.

ՀՀ քննչական կոմիտեն, ի դեմս գլխավոր քարտուղար՝ Ա.Նիկոյանի, որը գործում է դեպարտամենտի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և Արդարադատության ակադեմիան, ի դեմս Ակադեմիայի ռեկտոր Ս. Առաքելյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, ղեկավարվելով <<Արդարադատության ակադեմիայի մասին>> ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ մասով, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **մասնագետների վերապատրաստման** ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

1.3 Ծառայությունները մատուցվում են <<Արդարադատության ակադեմիայի մասին>> ՀՀ օրենքին, <<Արդարադատության ակադեմիայի մասին>> ՀՀ օրենքով սահմանված կարգով հաստատված ուսուցման ծրագրերին և այլ վերաբերելի իրավական ակտերին համապատասխան:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.1.4 Պատվիրատուից ողջամիտ ժամկետում ստանալ Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի պետերի,Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց քննիչների, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց՝ քննիչների թեկնածությունների, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի քննիչների լրացուցիչ վերապատրաստման թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց ցուցակները,

2.1.5 Պատվիրատուից սահմանված ժամկետում ստանալ գնահատման և բողոքարկման հանձնաժողովի անդամների ցուցակը,

2.1.6 Պատվիրատուից սահմանված ժամկետում ստանալ Թեկնածուների փորձաշրջանի կազմակերպման համար անհրաժեշտ քննչական ծառայության ստորաբաժանումների ցանկը, ինչպես նաև փորձաշրջանի ղեկավարների տվյալները:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.2.3. Ժամանակին տրամադրել Թեկնածուների (այսուհետ՝ Ունկնդիրներ) ցուցակները,

2.2.4. Ժամանակին ներկայացնել գնահատման և բողոքարկման հանձնաժողովի անդամների ցուցակը,

2.2.5. Թեկնածուների փորձաշրջանի կազմակերպման համար ապահովել համապատասխան քննչական ծառայության ստորաբաժանումների ցանկի, ինչպես նաև փորձաշրջանի ղեկավարների տվյալների ժամանակին ներկայացումը,

2.2.6. Կատարել <<Արդարադատության ակադեմիայի մասին>> ՀՀ օրենքով նախատեսված այլ պարտականություններ:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 5.3 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3.2. Պատվիրատուից ողջամիտ ժամկետում ստանալ Ունկնդիրների ցուցակները,

2.3.3. Պատվիրատուից սահմանված ժամկետում ստանալ գնահատման և բողոքարկման հանձնաժողովի անդամների ցուցակը,

2.3.4. Պատվիրատուից սահմանված ժամկետում ստանալ Թեկնածուների փորձաշրջանի կազմակերպման համար անհրաժեշտ քննչական ծառայության ստորաբաժանումների ցանկը, ինչպես նաև փորձաշրջանի ղեկավարների տվյալները:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 ժամանակին և պատշաճ կարգով կազմակերպել և անցկացնել Ունկնդիրների համապատասխանաբար՝ վերապատրաստման, մասնագիտական պատրաստման ծառայությունները,

2.4.5 Կազմել ու <<Արդարադատության ակադեմիայի մասին>> ՀՀ օրենքին համապատասխան, հաստատման ներկայացնել Ունկնդիրների ուսուցման գործընթացը կանոնակարգող անհրաժեշտ իրավական ակտերի նախագծերը,

2.4.6 Կազմակերպել քննական հարցերի մշակումը և ապահովել դրանց գաղտնիության պահպանումը,

2.4.7 Պատվիրատուի պահանջով տրամադրել Ունկնդիրների ուսուցմանը վերաբերող անհրաժեշտ տեղեկություններ,

2.4.8 Պատվիրատուի պահանջով վերացնել հայտնաբերված թերությունները,

2.4.9 Յուրաքանչյուր վերապատրաստման ուսուցման ծրագրի ավարտից հետո ներկայացնել ամփոփ տեղեկանք Ունկնդիրների ուսումնառության արդյունքների վերաբերյալ,

2.4.10 Կատարել <<Արդարադատության ակադեմիայի մասին>> ՀՀ օրենքով նախատեսված այլ պարտականություններ:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1 Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության առավելագույն գինը կազմում է **5400038 (հինգ միլիոն չորս հարյուր հազար երեսունութ)** ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

Սույն պայմանագրով մատուցման ենթակա Ծառայության գինը կազմում է.

4.2 5000 /հինգ հազար/ ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ, յուրաքանչյուր դասաժամի համար՝ անկախ տվյալ խմբում ունկնդիրների քանակից

4.3 1.3 /մեկ ամբողջ երեք տասնորդական/ ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ, յուրաքանչյուր Ունկնդրին 1 ակադեմիական ժամ ծավալով ուսուցման հաշվարկով՝ տվյալ Ունկնդրի գրենական պիտույքների, գույքի և սարքավորումների, էներգետիկ, կապի ծառայությունների, Զում ծրագրի վճարումների համար՝ անկախ դասաժամերին տվյալ ունկնդրի ներկայությունից կամ բացակայությունից:

4.4 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.4 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի

դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը: Ընդ որում մինչև պայմանագիր կնքվելը կատարողի կողմից մատուցված ծառայության դիմաց վճարումը իրականացվում է պայմանագիրը ՀՀ Ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու դեպքում:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ

սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է **5** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, 1.1, N 2, 2,1 N 3, N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ քննչական կոմիտե	<<Արդարադատության ակադեմիա>> ՊՈԱԿ
ՀՀ, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5	Հասցե՝ ք.Երևան, Փիրումյանների 9
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն,	«ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ, Մաշտոց մ/ճ
Հ/Հ 900011002145	Հ/Հ 16043032235600
ՀՎՀՀ 02631263	ՀՎՎՀ 00129631
(ստորագրություն)	Հեռ. 060 46 00 94
Կ.Տ.	(ստորագրություն)
	Կ.Տ.

Հավելված N 1
« 10 » մայիսի 2021 թ. կնքված
«ՀՀՔԿ-ՄԱԾՁԲ-ՄՎ-21/1» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության						
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման ժամկետը
1	80521100/1	ուսուցման ծրագրերի հետ կապված ծառայություններ	դրամ	5400038	1	25.12.2021թ

Ձեռքբերվող Ծառայության նկարագիր	
Պետեր և քննիչներ	ՈՒսուցման ծրագիր Հավելված 1.1
Քննիչների լրացուցիչ վերապատրաստում	ՈՒսուցման ծրագիր Հավելված 1.1
Քննիչների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց	ՈՒսուցման ծրագիր Հավելված 1.1

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ քննչական կոմիտե
ՀՀ, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն,
Հ/Հ 900011002145
ՀՎՀՀ 02631263

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

<<Արդարադատության ակադեմիա>>
ՊՈԱԿ
Հասցե՝ ք.Երևան, Փիրումյանների 9
«ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ, Մաշտոց մ/ճ
Հ/Հ 16043032235600
ՀՎՀՀ 00129631
Հեռ. 060 46 00 94

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված 1.1
«10» մայիսի 2021 թ. կնքված
«ՀՀՔԿ-ՄԱԾՁԲ-ՄԿ-21/1» ծածկագրով պայմանագրի

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՔՆՆԻՉՆԵՐԻ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն ուսուցման ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) ներառում է Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) քննիչների (այսուհետ՝ քննիչների) 2020թ. լրացուցիչ վերապատրաստման կրթական չափորոշիչները, ուսուցման ձևը, ժամաքանակը և ժամանակացույցը, ինչպես նաև դասավանդվող առարկայական կուրսերի համառոտ նկարագիրը:

2. Ծրագիրը մշակվել է Կոմիտեի նախագահի 2017 թվականի փետրվարի 27-ի թիվ 29-Լ հրամանի (2019 թվականի փետրվարի 18-ի թիվ 10-Լ հրամանով կատարված փոփոխությամբ) հիման վրա:

3. Ծրագիրը նպատակաուղղված է քննիչների՝ առանձին ոլորտներում անհրաժեշտ մասնագիտական գիտելիքների կատարելագործմանը և որակավորման բարձրացմանը:

4. Ծրագիրն իրականացվում է առկա ուսուցման ձևով: Լրացուցիչ վերապատրաստման ժամաքանակը 50 ակադեմիական ժամ է և իրականացվում է աշխատանքային 6 օրերի ընթացքում:

5. Վերապատրաստումն առավելապես իրականացվում է դասավանդման ինտերակտիվ մեթոդներով:

6. Վերապատրաստումն իրականացվում է 2021 թվականի մայիս ամսին:

II. ԴԱՍԱՎԱՆԴՎՈՂ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐԻ (ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ) ՑԱՆԿ

1. ՀՀ քննչական կոմիտեի քննիչների լրացուցիչ վերապատրաստման դասընթացների մոդուլ

N	Դասիչ	Անվանում	ժ/ք
1.	Q-040-17	ՀՀ քրեական իրավունքի արդի հարցերը	14
2.	Q-041-17	ՀՀ քրեական դատավարության արդի հարցերը	16
3.	Q-017-17	Կրիմինալիստիկական տակտիկայի և մեթոդիկայի արդի հարցերը	20

III. ԴԱՍԱՎԱՆԴՎՈՂ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐԻ (ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ) ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ

1. Q-040-17. ՀՀ քրեական իրավունքի արդի հարցերը

Դասընթացը պայմանավորված է քրեական իրավունքի ոլորտում իրականացված և ընթացողող բարեփոխումների, վիճահարույց հարցերի շուրջ ՀՀ սահմանադրական դատարանի և ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումների վերաբերյալ գիտելիքներ հաղորդելու, ինչպես նաև դրանք գործնականում կիրառելու կարողություններ ձևավորելու անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է՝

- քրեական նոր օրենսգրքի նախագծի հիմնադրույթները,
- քրեաիրավական ինստիտուտների, այդ թվում՝ պատժողական քաղաքականության զարգացման միտումները և հեռանկարները,

- հանցավոր արարքների ճշգրիտ որակման հիմնահարցերը (մասնավորապես՝ մարդու կյանքի և առողջության, սեռական ազատության և անձեռնմխելիության, այդ թվում անչափահասների դեմ ուղղված հանցագործությունների, թմրամիջոցների ապօրինի շրջանառության, սեփականաթության դեմ ուղղված և կոռուպցիոն հանցագործությունների և այլն) և դրանց լուծման ոլորտում օրենսդրական և իրավակիրառ փորձը,
- ՀՀ ստանձնած միջազգային պարտավորությունների բովանդակությունը (այդ թվում՝ Միավորված ազգերի կազմակերպության Մարդու իրավունքների վերաբերյալ հիմնական պայմանագրերը, դրանց կիրառման առանձնահատկությունները, ինչպես նաև «Քաղաքական և քաղաքացիական իրավունքների մասին» միջազգային դաշնագրում ամրագրված իրավունքները, ինչպես նաև դրանց ներպետական օրենսդրությունում կիրառելիության և Կամընտիր արձանագրությամբ հասանելի դարձած ընթացակարգերի հարցերը):

2. Q-041-17. ՀՀ քրեական դատավարության արդի հարցերը

Դասընթացը անհրաժեշտ է քրեական դատավարության ոլորտում նոր իրավական զարգացումները, վիճահարույց հարցերի շուրջ ՀՀ սահմանադրական դատարանի և ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումները մատուցելու, դրանք գործնականում կիրառելու, ինչպես նաև քննչական գործողությունների կատարման կարգի պահպանման կարողությունների կատարելագործման համար:

Դասընթացը ներառում է՝

- ՀՀ քրեական դատավարության ոլորտում նոր օրենսդրությունը,
- ՀՀ քրեական դատավարության մինչդատական վարույթին վերաբերող առանձին ինստիտուտների վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանի և ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումները և դրանց կիրառման հիմնահարցերը,
- ՀՀ մասնակցությամբ միջազգային պայմանագրերի կիրառման գործնական հարցերը, այդ թվում՝ Միավորված ազգերի կազմակերպության Մարդու իրավունքների վերաբերյալ հիմնական պայմանագրերի կիրառման առանձնահատկությունները,
- քննչական գործողությունների կատարման ընթացքում ծագող գործնական հիմնահարցերը և նախաքննության ընթացքում քննիչների կողմից թույլ տրվող խախտումները,
- առանձին քննչական գործողությունների կատարման դատավարական և կրիմինալիստիկական առանձնահատկությունները,
- նախաքննության ընթացքում կայացվող որոշումների և քննչական գործողությունների արձանագրությունների կազմման առանձնահատկությունները,
- դատավարական հարկադրանքի միջոցները և դրանց ուսումնասիրությունը ապացույցների և ապացուցման գործընթացի խնդիրները, օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքներն ապացուցման գործընթացում օգտագործելու իրավական կարգավորման խնդիրները,
- պետական, նոտարական և բանկային գաղտնիք պարունակող տեղեկություններ ստանալու դատավարական կարգը և այլն:

3. Q-017-17. Կրիմինալիստիկական տակտիկայի և մեթոդիկայի արդի հարցերը

Դասընթացը պայմանավորված է կրիմինալիստիկական տակտիկայի և մեթոդիկայի վերաբերյալ գիտելիքներ հաղորդելու և դրանք պատշաճ կենսագործելու կարողություններ ձևավորելու անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է՝

- դեպքի վայրի զննության, ճանաչման ներկայացնելու, հարցաքննության և այլ քննչական գործողությունների կատարման տակտիկային վերաբերող հարցերը,

• կյանքի, առողջության, սեփականության, տնտեսական գործունեության, հասարակական անվտանգության, հասարակական կարգի ու բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործությունների քննության մեթոդիկային վերաբերող հարցերը:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՈՒՄ ԻՆՔՆԱՎԱՐ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

7. Սույն ուսուցման ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) ներառում է Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեում (այսուհետ՝ Կոմիտե) ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց (այսուհետ՝ քննիչներ) 2021թ. վերապատրաստման կրթական չափորոշիչները, ուսուցման ձևը, ժամաքանակը և ժամանակացույցը, ինչպես նաև դասավանդվող առարկայական կուրսերի համառոտ նկարագիրը:

8. Ծրագիրը մշակվել է Կոմիտեի նախագահի 2021 թվականի մարտի 2-ի թիվ 9-Լ հրամանի հիման վրա:

9. Ծրագիրը նպատակաուղղված է քննիչների մասնագիտական գիտելիքների և հմտությունների շարունակական կատարելագործմանը քրեական իրավունքի, քրեական դատավարության, կրիմինալիստիկական տակտիկայի և մեթոդիկայի արդի հարցերի, փորձագիտական գործունեության և դատական փորձաքննությունների ժամանակակից հնարավորությունների, Հայաստանում կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման ու դրա դեմ պայքարի, զինվորական ենթակայության կարգի և զինծառայողների կանոնագրքային փոխհարաբերությունների դեմ ուղղված հանցագործությունների որակումը և քննության առանձնահատկությունները, կիբեռհանցագործությունների որակման ու քննության առանձնահատկությունների, քրեական գործերով ՄԻԵԴ իրավական դիրքորոշումների կիրառման արդի հարցերի, կոռուպցիոն դեպքերի քննության, կալանքի և այլընտրանքային խափանման միջոցների, երեխայի նկատմամբ բռնության քննության առանձնահատկությունների, հարցաքննության մեթոդների և հաղորդակցության կառավարման ու մի շարք այլ ոլորտներում:

10. Վերապատրաստման ժամաքանակը Կոմիտեի մարմինների և ստորաբաժանումների պետերի համար սահմանվում է 24 ակադեմիական ժամ՝ 3 աշխատանքային օր տևողությամբ, իսկ մյուս քննիչների համար՝ 30 ակադեմիական ժամ՝ 4 աշխատանքային օր տևողությամբ:

11. Վերապատրաստումն առավելապես իրականացվում է դասավանդման ինտերակտիվ մեթոդներով:

12. Դասավանդվող առարկայական կուրսերի (դասընթացների) ընտրությունը քննիչների կողմից կատարվում է ըստ Հավելված 1.1-ում ներկայացված փաթեթների:

13. Վերապատրաստման ժամանակացույց է սահմանվում 2021 թվականի հուլիս-դեկտեմբեր ամիսները:

II. ԴԱՍԱՎԱՆԴՎՈՂ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐԻ (ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ) ՑԱՆԿ

2. Կոմիտեի մարմինների և ստորաբաժանումների պետերի վերապատրաստման դասընթացների մոդուլ

N	Դասիչ	Անվանում	ժ/ք
1.	I-Q-087-21	Քրեագիտական տեխնիկայի կիրառման	8

		հիմնախնդիրները	
2.	I-Q-088-21	Կառավարման հոգեբանություն	8
3.	I-Q-089-21	ՀՀ քննչական կոմիտեի մարմիններում և ստորաբաժանումներում աշխատանքի կազմակերպման հիմնախնդիրները	8
4.	I-J-009-21	Փորձագիտական գործունեությունը և դատական փորձաքննությունների ժամանակակից հնարավորությունները	8
5.	I-Q-071-21	Կոռուպցիոն դեպքերի քննությունը	8
6.	I-Q-085-21	Հանցագործությունների քննության մեթոդիկայի ընդհանուր դրույթները	8

2. Կոմիտեի այլ քննիչների վերապատրաստման դասընթացների մոդուլ

N	Դասիչ	Անվանում	Ժ/ք
1.	I-J-009-21	Փորձագիտական գործունեությունը և դատական փորձաքննությունների ժամանակակից հնարավորությունները	8
2.	I-J-031-21	Հայաստանում կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելում ու դրա դեմ պայքար	6
3.	I-Q-028-21	Զինվորական ենթակայության կարգի և զինծառայողների կանոնագրքային փոխհարաբերությունների դեմ ուղղված հանցագործությունների որակումը և քննության առանձնահատկությունները	10
4.	I-Q-030-21	Կիբեռհանցագործությունների որակումն ու քննության առանձնահատկությունները	8
5.	I-Q-042-21	Քրեական գործերով ՄԻԵԴ իրավական դիրքորոշումների կիրառման արդի հարցեր	6
6.	I-Q-071-21	Կոռուպցիոն դեպքերի քննությունը	8
7.	I-Q-073-21	Ներքին ուսումնասիրություններ (քննություն)	8
8.	I-Q-074-21	Կալանք և այլընտրանքային խափանման միջոցներ	8
9.	I-Q-076-21	Անչափահաս կամ փոքրամասնության խմբին պատկանող իրավախախտների իրավունքների պաշտպանությունը	8
10.	I-Q-077-21	Կոռուպցիոն բնույթի ֆինանսական հանցագործություններ և անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ պայքարը	8
11.	I-Q-078-21	Մտավոր սեփականության դեմ ուղղված հանցագործությունների քննությունը և դրանց դեմ պայքարը	6
12.	I-Q-079-21	Երեխայի նկատմամբ բռնության բնութագիրը և քննության առանձնահատկությունները	4
13.	I-Q-081-21	Հարցաքննության մեթոդները և հաղորդակցության կառավարումը	8
14.	I-Q-030-21	Էլեկտրոնային ապացույցների կիրառման հիմնախնդիրները քրեական դատավարությունում	8

15.	I-Q-082-21	Զինված ուժերում խոշտանգումների, վատ վերաբերմունքի և մահվան դեպքերի արդյունավետ քննությունը	8
16.	I-Q-083-21	Սեփականության և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների քննության մեթոդիկան	8
17.	I-Q-084-21	Թմրանյութերի ապօրինի շրջանառության վերաբերյալ գործերի քննության մեթոդիկան	6
18.	I-Q-085-21	Հանցագործությունների քննության տակտիկայի և մեթոդիկայի ընդհանուր դրույթները	6
19.	I-Q-086-21	Քրեական ենթամշակույթին առնչվող արարքների որակման հիմնահարցերը և դրանց վերաբերյալ գործերի քննության մեթոդիկան	4
20.	I-Q-090-21	Խաղաղության և մարդկության անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների որակման և քննության առանձնահատկությունները	4

III. ԴԱՍԱՎԱՆԴՎՈՂ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐԻ (ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ) ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ

4. I-Q-087-21. Քրեագիտական տեխնիկայի կիրառման հիմնախնդիրները

Դասընթացը պայմանավորված է քննչական գործունեության ընթացքում քրեագիտական տեխնիկայի հասկացության և դրա կիրառական օգտագործման վերաբերյալ գիտելիքների և գործնական հմտությունների կատարելագործմանը:

Դասընթացը ներառում է քննչական գործողությունների ընթացքում կիրառվող քրեագիտական տեխնիկայի դասական կանոնների, հետաքրքրություն ներկայացնող օբյեկտների առգրամվան և հետագայում հատուկ հետազոտություններ նշանակելու առումով քրեագիտական տեխնիկային առնչվող գիտելիքների օգտագործման, ինչպես նաև համապատասխան քրեագիտական տեխնիկայի ճիշտ օգտագործման և տեխնիկական սպասարկման առանձնահատկությունների ուսումնասիրությունը:

5. I-Q-088-21. Կառավարման հոգեբանություն

Դասընթացի նպատակն է ՀՀ քննչական կոմիտեի մարմիններում և ստորաբաժանումներում ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց մոտ կառավարչական հմտությունների ձևավորումն ու զարգացումը, անձնակազմի կառավարման հոգեբանական նրբությունների տիրապետմանն ուղղված կարողությունների կատարելագործումը:

Դասընթացը ներառում է անձի հոգեբանության, կառավարման հոգեբանության, ղեկավարման կարողությանը նպաստող անհատական հոգեբանական առանձնահատկությունների, ղեկավարի ինքնաներկայացման, աշխատակցի հոգեբանական կերպարի գնահատման, աշխատանքային ռեսուրսները բաշխելու, խմբի առաջնորդության, բարոյահոգեբանական մթնոլորտի ձևավորման և պահպանման հոգեբանական մեխանիզմների ու չափանիշների, կոլեկտիվում հոգեբանական ներգործության մեխանիզմների ու ձևերի ուսումնասիրությունը:

6. I-Q-089-21. ՀՀ քննչական կոմիտեի մարմիններում և ստորաբաժանումներում աշխատանքի կազմակերպման հիմնախնդիրները

Սույն դասընթացն անհրաժեշտ է ՀՀ քննչական կոմիտեի գործունեության կազմակերպման վերաբերյալ գիտելիքների և գործնական հմտությունների կատարելագործման և ընդլայնման համար:

Դասընթացը նպատակաուղղված է ՀՀ քննչական կոմիտեի գործունեության իրավական հիմքերի, քննչական գործունեության ընթացքում առաջացող խնդիրների, օրենսդրական

բացերի, քննչական սխալների, ՀՀ քննչական կոմիտեի մարմիններում և ստորաբաժանումներում ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց կողմից աշխատանքի արդյունավետ կազմակերպման և ղեկավարման, այդ թվում՝ աշխատանքի համաչափ բաշխման, կարգապահության հետ կապված հիմնախնդիրների ուսումնասիրությանը:

7. I-J-009-21. Փորձագիտական գործունեությունը և դատական փորձաքննությունների ժամանակակից հնարավորությունները

Դասընթացը պայմանավորված է փորձագիտական գործունեության և փորձաքննությունների վերաբերյալ գիտելիքների ծավալի ընդլայնման, համարժեք և արդյունավետ փորձաքննությունների նշանակման կարողությունների ձևավորման անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է դատական փորձաքննության տեսական-իրավական հիմնախնդիրները, փորձագիտական գործունեությունը և դրա առանձնահատկությունները, քրեական վարույթում փորձաքննությունների (դատական հետքաբանություն, պայթյունատեխնիկական, դատաբժշկական, դատահոգեբանական, դատահոգեբուժական, նյութագիտական, դատաձեռագրաբանական, դատաձգաբանական, դատահամակարգչա-տեխնիկական և այլ) ժամանակակից հնարավորությունները, դրանց նշանակման հիմքերի, կարգի, բովանդակության, փորձաքննությունների կատարման և արդյունքների գնահատման վերաբերյալ հիմնահարցերը:

8. I-J-031-21. Հայաստանում կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելում ու դրա դեմ պայքար

Դասընթացն ուղղված է արդարադատության ողջ շղթայում սեռի հիմքով բռնության դեմ պայքարին առնչվող հարցերի առանձնահատկությունների ուսումնասիրությանը, այս բնագավառում գիտելիքների ծավալի ընդլայնմանն ու կատարելագործմանը:

Դասընթացը ընդհանուր գիտելիքներ կապահովի կանանց դերի վերաբերյալ կարծրատիպերի և սեռի հիմքով բռնության, Հայաստանում դրա տարածվածության և բռնության նկատմամբ վերաբերմունքին վերաբերող հիմնահարցերի մասին, ինչպես նաև ընդհանուր պատկերացում կտա համապատասխան միջազգային գործիքակազմի և կիրառելի ստանդարտների վերաբերյալ: Դասընթացի շրջանակում անդրադարձ կկատարվի զոհի անվտանգությունն ապահովելու նպատակով անհետաձգելի միջամտության և պաշտպանական որոշումների իրականացմանը, ընտանեկան բռնության դեպքերի վերաբերյալ հաշտարարության գործերում առկա հիմնահարցերին, միջ-գերատեսչական համագործակցության ստանդարտներին, քրեական վարույթի առանձնահատկություններին՝ գործի քննությունից մինչև դատավճռի կայացման փուլն ընկած ողջ ժամանակահատվածում:

9. I-Q-028-21. Զինվորական ենթակայության կարգի և զինծառայողների կանոնագրքային փոխհարաբերությունների դեմ ուղղված հանցագործությունների որակումը և քննության առանձնահատկությունները.

Դասընթացն անհրաժեշտ է զինվորական հանցագործությունների վերաբերյալ գործերով քրեական օրենքի ճիշտ կիրառման, այդ գործերի քննության առանձնահատկությունների, ինչպես նաև այդ ոլորտում ՀՀ սահմանադրական դատարանի և ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումների վերաբերյալ գիտելիքները և հմտությունները կատարելագործելու համար:

Դասընթացը ներառում է զինվորական հանցագործություններ նախատեսող հանցակազմերի մանրամասն ներկայացումը՝ ՀՀ գործող քրեական օրենսգրքի և ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագծի համաձայն, զինվորական կարգապահության

խախտումների և զինվորական հանցագործությունների տարանջատման հարցերը, մասնավորապես՝ նույն արարքի համար կրկին պատասխանատվության չենթարկվելու սկզբունքի տեսանկյունից, զինվորական հանցագործությունների ընդհանուր և որակյալ հանցակազմերի որակման առանձնահատկությունները:

Դասընթացը ներառում է նաև զինվորական հանցագործությունների, ինչպես նաև ժամկետային զինվորական կամ այլընտրանքային ծառայությունից, վարժական հավաքներից կամ զորահավաքային ծառայությունից խուսափելու քննության առանձնահատկությունները:

10. I-Q-030-21. Կիբեռհանցագործությունների որակումն ու քննության առանձնահատկությունները

Դասընթացն անհրաժեշտ է համակարգչային տեղեկատվության անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների, դրանց քննության մեթոդաբանության առանձին հարցերի կապակցությամբ գիտելիքներ հաղորդելու և դրանց կիրառման հմտություններ ձևավորելու համար:

Դասընթացը ներառում է «Կիբեռհանցագործությունների մասին» ԵԽ Կոնվենցիայով նախատեսված քրեական հանցագործությունների վերաբերյալ նորմերի իմպլեմենտացիայի խնդիրները ՀՀ քրեական օրենսգրքում, Կոնվենցիայի հիման վրա ստեղծված կոմիտեի (T-CY)՝ արարքների որակման հետ կապված բանաձևերը, ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված արարքների որակման հիմնախնդիրները, մանկական պոռնոգրական նյութերի հետ կապված քրեական գործերով ապացույցների ձեռքբերման հնարավոր տարբերակները, «տոր» կամ «մութ» ցանցերից ապացույցներ ձեռքբերելու դժվարությունները, նման հանցագործությունների լատենտայնությունը, կիբերհանցագործություններով միջազգային փոխօգնության հիմնախնդիրները:

11.I-Q-042-21. Քրեական գործերով ՄԻԵԴ իրավական դիրքորոշումների կիրառման արդի հարցեր

Դասընթացն անհրաժեշտ է ՄԻԵԴ իրավական նոր դիրքորոշումների վերաբերյալ գիտելիքներ հաղորդելու և կարողություններ ձևավորելու համար:

Դասընթացը ներառում է քրեական իրավունքի և դատավարության ոլորտում Եվրոպական կոնվեցիայով և միջազգային այլ պայմանագրերով երաշխավորված իրավունքների (այդ թվում՝ կյանքի իրավունքի, խոսքի ազատության և ազգային անվտանգության ապահովման հիմնախնդիրների, անձի ազատության և անձնական անձեռնմխելիության, մասնավոր կյանքի անձեռնմխելիության, արդար դատաքննության իրավունքների պաշտպանության, անթույլատրելի ապացույցների օգտագործման արգելքի, խոշտանգումների և այլ դաժան վերաբերմունքի արգելքի, ռասիզմի և խտրականության արգելքի) պաշտպանության վերաբերյալ ՄԻԵԴ արդի նախադեպային իրավունքը և ՀՀ նկատմամբ դրա կիրառման հիմնահարցերը, ինչպես նաև վերոհիշյալ հիմնահարցերի վերաբերյալ վերջին տարիների ՄԻԵԴ իրավական դիրքորոշումները և քննչական պրակտիկայում դրանց կիրառման հմտությունները:

12. I-Q-071-21. Կոռուպցիոն դեպքերի քննությունը

Դասընթացն անհրաժեշտ է կոռուպցիոն դեպքերի քննությանն առնչվող հիմնահարցերի վերաբերյալ գիտելիքների ծավալի ընդլայնման, դրանք կենսագործելու կարողությունների ու գործնական հմտությունների կատարելագործման համար:

Դասընթացի շրջանակում քննարկվելու են կոռուպցիոն դեպքերի քննության առանձնահատկությունները, ուսումնասիրվելու են կոռուպցիոն հանցագործությունների պատճառները և հետևանքները, կոռուպցիայի դեմ պայքարի ազգային և միջազգային փորձը,

կոռուպցիայի դեմ պայքարի իրավական հիմքերը (ՀՀ և միջազգային), կանխմանն ուղղված սահմանափակումները:

13. I-Q-073-21. Ներքին ուսումնասիրություններ (քննություն)

Դասընթացն անհրաժեշտ է աշխատավայրում ծառայողական քննությունների անցկացման, ներքին աուդիտի ուսումնասիրությունների, ազդարարների պաշտպանության, արտաքին հետաքննություն իրականացնողներին իրազեկման ոլորտում անհրաժեշտ գիտելիքների և կարողությունների կատարելագործման, վերջիններիս կիրառման գործնական հմտությունների զարգացման համար:

Այս դասընթացի շրջանակում կուսումնասիրվեն պետական կառավարման մարմիններում ծառայողական քննության ընթացակարգը և պատասխանատվությունը, ներքին աուդիտի դերը և գործառույթները, պետության ֆինանսական վերահսկողության գործառույթը և դրա իրականացման ընթացակարգն ու հաշվետվողականությունը, ազդարարումը և սուտ մատնությունը, ինչպես նաև ազդարարման արտոնությունից օգտվելու չարաշահումները, տարբերությունները և հնարավոր համընկնումները, իրավապահ մարմիններին իրազեկելու պարտասխանատվություն ունեցող իրավասու անձանց նույնականացումը և այլ հիմնահարցեր:

14. I-Q-074-21. Կալանք և այլընտրանքային խափանման միջոցներ

Դասընթացն անհրաժեշտ է կալանք և այլընտրանքային խափանման միջոցներ կիրառելու դեպքերի վերաբերյալ ազգային և միջազգային փորձի ուսումնասիրության, այս ոլորտում անհրաժեշտ գիտելիքների և կարողությունների կատարելագործման, գործնական խնդիրների վերհանման և փորձի փոխանակման համար:

Դասընթացի շրջանակում ուսումնասիրման առարկա կդառնան ազատության սահմանափակման հիմքերը, ազատությունից զրկված անձանց համար նախատեսված երաշխիքները, այլընտրանքային խափանման միջոցները, կներկայացվեն կալանքի օրինականության վերաբերյալ ՄԻԵԴ նախադեպային իրավունքը և ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումները:

15. I-Q-076-21. Անչափահաս կամ փոքրամասնության խմբին պատկանող իրավախախտների իրավունքների պաշտպանությունը

Դասընթացն անհրաժեշտ է անչափահաս կամ փոքրամասնության խմբին պատկանող իրավախախտների իրավունքների պաշտպանության ոլորտում գիտելիքներն ընդլայնելու, տեսական գիտելիքների գործնական կիրառման հմտությունները զարգացնելու, ինչպես նաև իրավական նոր դիրքորոշումները ունկնդիրներին մատուցելու համար:

Դասընթացի շրջանակում քննարկումները տեղի կունենան, մասնավորապես, հետևյալ ասպեկտներով.

- Անչափահասների քրեական պատասխանատվության և պատժի առանձնահատկությունները,
- Անչափահասների և փոքրամասնության խմբին պատկանող իրավախախտների մասնակցությամբ վարույթի սկզբունքային առանձնահատկությունները, ներպետական օրենսդրական կարգավորումները և միջազգային փորձը,
- Անչափահասների և փոքրամասնության խմբին պատկանող իրավախախտների նկատմամբ դատավարական հարկադրանքի միջոցների կիրառման առանձնահատկությունները,
- Ապացուցման գործընթացի առանձնահատկությունները,
- Անչափահաս և փոքրամասնության խմբին պատկանող իրավախախտների մասնակցությունը քննչական և դատավարական գործընթացին,

• Օրինական ներկայացուցչի և պաշտպանի մասնակցությունը անչափահաս և փոքրամասնության խմբին պատկանող իրավախախտների մասնակցությամբ վարույթին:

16. I-Q-077-21. Կոռուպցիոն բնույթի ֆինանսական հանցագործություններ և անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ պայքարը

Դասընթացի նպատակը կոռուպցիոն բնույթի ֆինանսական հանցագործությունների քննության և անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ պայքարում անհրաժեշտ գիտելիքների, կարողությունների, հմտությունների ծավալի ընդլայնմանումն ու կատարելագործումն է:

Դասընթացի շրջանակում քննարկումները տեղի կունենան, մասնավորապես, հետևյալ ասպեկտներով.

• Ֆինանսական հանցագործությունների բնորոշումը. փողերի լվացում, բանկային գաղտնիք, արժեթղթերի շուկայի չարաշահումներ, հարկեր թաքցնել, եկամուտների հայտարարագրման հիմնախնդիրներ,

• Անդրազգային կազմակերպված հանցավորությունը, սահմանումները, տիպերը, բնութագրերը, պատճառները, հետևանքները և ֆինանսական հանցագործություններին ու անդրազգային կազմակերպված հանցավորությանը արձագանքելու հետ կապված այլ հարցեր:

Դասընթացի շրջանակում ներկայացվելու են քննարկվող նյութի վերաբերյալ օրենսդրական կարգավորումները, միջազգային փորձը, իրական կյանքից վերցված գործնական իրավիճակներ:

17. I-Q-078-21. Մտավոր սեփականության դեմ ուղղված հանցագործությունների քննությունը և դրանց դեմ պայքարը

Դասընթացն անհրաժեշտ է մտավոր սեփականության դեմ ուղղված հանցագործությունների քննության և դրանց դեմ պայքարի ոլորտում արդի խնդիրները քննության առարկա դարձնելու, այս բնագավառում գիտելիքների ծավալն ընդլայնելու, գործնական հմտությունները կատարելագործելու համար:

Դասընթացի շրջանակում կուսումնասիրվեն մտավոր սեփականության դեմ ուղղված հանցագործությունների տիպերը, բնութագրերը, պատճառները, հետևանքները, մտավոր սեփականության դեմ ուղղված հանցագործությունների քննության առանձնահատկությունները:

18. I-Q-079-21. Երեխայի նկատմամբ բռնության բնութագիրը և քննության առանձնահատկությունները

Դասընթացն անհրաժեշտ է երեխաների նկատմամբ բռնությունների դեմ պայքարում, այդ բռնությունների որակման, դրանց առնչությամբ վարույթի և քննության վերաբերյալ գիտելիքներն ընդլայնելու, տեսական գիտելիքների գործնական կիրառման հմտությունները զարգացնելու, ՀՀ քննչական և դատական պրակտիկայում առկա խնդիրները վերհանելու, ինչպես նաև իրավական նոր դիրքորոշումները ունկնդիրներին մատուցելու համար:

Դասընթացի շրջանակում քննարկումները տեղի կունենան, մասնավորապես, հետևյալ ասպեկտներով՝

• Երեխաների նկատմամբ բռնության հասկացությունը, տեսակները, հանցավոր դրսևորումների քրեական բնութագիրը,

• Երեխաների նկատմամբ բռնության հոգեբանական հետևանքները և հակազդման առանձնահատկությունները,

• Երեխաների նկատմամբ բռնության դեպքերի քննության առանձնահատկությունները քննության սկզբնական և հետագա փուլերում (քննության մեթոդիկան ու տակտիկան),

• Քրեական դատավարությունում բռնության ենթարկված երեխաների իրավունքների ապահովումը,

• Օրինական ներկայացուցչի, մանկավարժի և մասնագետի (հոգեբանի) մասնակցությունը քրեական գործով վարույթին՝ որպես երեխայի իրավունքների և օրինական շահերի ապահովման երաշխիք,

• Երեխայի իրավունքների ապահովման առանձնահատկությունները դատական քննության փուլում,

• Բռնության ենթարկված երեխաների հարցաքննության առանձնահատկությունները

• Երեխայի նկատմամբ բռնության դեպքերի քննության ընթացքում միջոլորտային և միջգերատեսչական համագործակցությունն ու դրա ձևերը:

19. I-Q-081-21. Հարցաքննության մեթոդները և հաղորդակցության կառավարումը

Դասընթացը պայմանավորված է հարցաքննության մեթոդների և հաղորդակցության կառավարման վերաբերյալ գիտելիքների ծավալի ընդլայնման և կարողությունների ձևավորման, ինչպես նաև տեսական գիտելիքները գործնակում կիրառելու հմտությունների զարգացման անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է՝

- Հարցաքննության մեթոդները և տակտիկական յուրահատկությունները.
- Արդյունավետ հաղորդակցման հմտությունները, հարցաքննության տակտիկան.
- Կիբեռհանցագործության հոգեբանությունը, կիբեռհանցագործի հոգեբանական կերպարի գնահատումը և բացահայտումը.
- Զոհի հոգեբանությունը, նախաքննության արդյունավետ մեթոդաբանությունը.
- Սուիցիդի (ինքնասպանության) հոգեբանությունը, նախաքննության արդյունավետ մեթոդաբանությունը.
- Անչափահասների հարցաքննության առանձնահատկությունները, անչափահասի մասնակցությամբ նախաքննության արդյունավետ մեթոդաբանությունը.
- Մեղադրյալի հոգեբանությունը, հոգեբանական ներազդեցության գնահատումը և պաշտպանությունը ներազդեցությունից.
- Հարցաքննության նախապատրաստման տակտիկան, ցանցային պրոֆայլինգ.
- Սթրեսի կառավարում.
- Թիմային աշխատանքի հմտություններ:

Դասընթացը ներառում է նաև՝

- Հաղորդակցության ընդհանուր տեսանկյունները (թե՛խոսքային և թե՛ ոչ խոսքային, բանավոր և գրավոր, լսող կողմի ընկալմանը նպաստող մեթոդներ, արդյունավետ ունկնդրում),
- Հաղորդակցությունը զանգվածային լրատվամիջոցների հետ,
- Հաղորդակցությունը վկաների հետ,
- Հաղորդակցությունը զոհերի հետ,
- Հաղորդակցությունը մեղադրյալի հետ,
- Հաղորդակցությունը փաստաբանների և դատավարության մյուս մասնակիցների հետ,
- Հաղորդակցությունը անչափահասների հետ (ինչպես հարցեր տալ, ինչպես ստանալ արժանահավատ տեղեկություններ և այլն),
- Հաղորդակցությունը փոքրամասնությունների ներկայացուցիչների հետ,
- Միջմշակութային հաղորդակցություն:

20. I-Q-030-21. Էլեկտրոնային ապացույցների կիրառման հիմնախնդիրները քրեական դատավարությունում

Դասընթացն անհրաժեշտ է ցանկացած տեսակի, այդ թվում՝ համակարգչային տեղեկատվության անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների քննության ընթացքում էլեկտրոնային ապացույցների հավաքման, ստուգման, գնահատման ու կիրառման հասամալիր հարցերի կապակցությամբ գիտելիքներ հաղորդելու և ապացուցման գործընթացում դրանց տակտիկապես գրագետ կիրառման հմտություններ ձևավորելու համար:

Դասընթացը ներառում է «Կիբեռհանցագործությունների մասին» ԵՄ Կոնվենցիայով նախատեսված քրեական հանցագործությունների վերաբերյալ նորմերի իմպլեմենտացիայի խնդիրները ՀՀ քրեական օրենսգրքում, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված ապացուցման գործընթացի հիմնախնդիրները, էլեկտրոնային ապացույցների հետ աշխատելու քրեադատավարական առանձնահատկությունները, խնդրո առարկա բնագավառի վերաբերյալ ՄԻԵԴ-ի, ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները, ինչպես նաև սույն ոլորտում միջազգային փոխօգնության հիմնախնդիրները:

21. I-Q-082-21. Զինված ուժերում խոշտանգումների, վատ վերաբերմունքի և մահվան դեպքերի արդյունավետ քննությունը

Դասընթացը պայմանավորված է զինված ուժերում խոշտանգումների, վատ վերաբերմունքի և մահվան դեպքերի արդյունավետ քննության ոլորտում կրիմինալիստիկական գիտելիքների ծավալի ընդլայնման անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է՝

– Վատ վերաբերմունքի վերաբերյալ իրականացվող արդյունավետ քննության էությունը,
– Մարդու իրավունքների՝ վատ վերաբերմունքին վերաբերող եվրոպական չափանիշները, այդ համատեքստում արդյունավետ քննությունը,
– Զինված ուժերի համատեքստում վատ վերաբերմունքի վերաբերյալ արդյունավետ քննություն կատարելու միջազգային լավագույն փորձը,
– Մարդու իրավունքների՝ վատ վերաբերմունքին վերաբերող եվրոպական չափանիշների վերաբերյալ ՄԻԵԴ նախադեպային իրավունքը:

22. I-Q-083-21. Սեփականության և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների քննության մեթոդիկան

Դասընթացն անհրաժեշտ է սեփականության և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների քննության ոլորտում առկա արդի հիմնախնդիրները ուսումնասիրելու, այս բնագավառում տեսական գիտելիքների ծավալն ընդլայնելու, ինչպես նաև գործնական հմտությունները կատարելագործելու համար:

Դասընթացի շրջանակում կուսումնասիրվեն սեփականության և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների տեսակները, բնութագրերը, պատճառները, հետևանքները, այդօրինակ հանցագործությունների քննության տակտիկայի և մեթոդիկայի առանձնահատկությունները:

23. I-Q-084-21. Թմրանյութերի ապօրինի շրջանառության վերաբերյալ գործերի քննության մեթոդիկան

Դասընթացն անհրաժեշտ է թմրանյութերի ապօրինի շրջանառության վերաբերյալ քրեական գործերի քննության և դրա դեմ պայքարի ոլորտում արդի հիմնախնդիրները ուսումնասիրելու, այս բնագավառում տեսական գիտելիքների ծավալն ընդլայնելու, ինչպես նաև գործնական հմտությունները կատարելագործելու համար:

Դասընթացի շրջանակում կուսումնասիրվեն թմրամիջոցների ապօրինի շրջանառությանն առնչվող հանցագործությունների բնութագրերը, պատճառները, հետևանքները, այդ

հանցագործությունների առնչությամբ հարուցվող քրեական գործերի քննության առանձնահատկությունները, դրանց ընթացքում կիրառվող տակտիկական հնարքների և մեթոդիկայի յուրահատկությունները:

24. I-Q-085-21. Հանցագործությունների քննության տակտիկայի և մեթոդիկայի ընդհանուր դրույթները

Դասընթացը պայմանավորված է հանցագործությունների քննության մեթոդիկայի հարցում տեսական գիտելիքների ծավալի ընդլայնման, գործնական ունակությունների և կարողությունների կիրառման հմտության ձևավորման անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է հանցագործությունների քննության մեթոդիկայի վերաբերյալ ընդհանուր դրույթների ուսումնասիրություն, առանձին հանցագործությունների քննության, այդ թվում՝ իշխանության ներկայացուցչի նկատմամբ բռնություն գործադրելու և ինքնիրավչության քննության, առանձնահատկությունները. մեթոդիկայի յուրահատկությունների քննարկում, իրավիճակային խնդիրների միջոցով կոնկրետ տեսակի հանցագործությունների քննության մեթոդիկայի փորձարկում:

Դասընթացը ներառում է նաև՝

– Հանցագործությունների բացահայտմանն ուղղված քրեագիտական խնդիրների լուծման համակարգչա-տեխնիկական ապահովումը.

– Քրեագիտական հետազոտությունների ոչ ավանդական ուղղությունների գիտական հիմնավորվածությունն ու թույլարտելիությունը.

– Պոլիգրաֆի օգտագործման առանձնահատկությունները հանցագործությունների բացահայտման գործում.

– Դակտիլոսկոպիկ հետազոտությունների օբյեկտների հայտնաբերման և ամրագրման նոր միջոցներն ու եղանակները.

– Առանձին քննչական գործողությունների (քննչական փորձարարության, ճանաչման ներկայացնելու, խուզարկության, նմուշներ ստանալու և այլն) կատարման տակտիկան:

25. I-Q-086-21. Քրեական ենթամշակույթին առնչվող արարքների որակման հիմնահարցերը և դրանց վերաբերյալ գործերի քննության մեթոդիկան

Դասընթացը պայմանավորված է քրեական ենթամշակույթին առնչվող արարքների որակման և դրանց վերաբերյալ գործերի քննության մեթոդիկայի հարցում գիտելիքների ծավալի ընդլայնման, գործնական ունակությունների և կարողությունների կիրառման հմտության ձևավորման անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է քրեական ենթամշակույթին առնչվող արարքների որակման առանձնահատկությունների, դրանց վերաբերյալ գործերի քննության պլանավորման, պարզաբանման և ապացուցման ենթակա հանգամանքների վերհանման, քննության սկզբնական և հետագա փուլերի, ինչպես նաև առանձին քննչական գործողությունների կատարման առանձնահատկությունների ուսումնասիրությունը:

26. I-Q-090-21. Խաղաղության և մարդկության անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների որակման և քննության առանձնահատկությունները

Դասընթացը պայմանավորված է խաղաղության և մարդկության անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների որակման և դրանց վերաբերյալ գործերի քննության մեթոդիկայի հարցում գիտելիքների ծավալի ընդլայնման, գործնական ունակությունների և կարողությունների կիրառման հմտության ձևավորման անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է խաղաղության և մարդկության անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների որակման առանձնահատկությունների, դրանց վերաբերյալ գործերի քննության պլանավորման, պարզաբանման և ապացուցման ենթակա հանգամանքների

վերհանման, քննության սկզբնական և հետագա փուլերի, ինչպես նաև առանձին քննչական գործողությունների կատարման առանձնահատկությունների ուսումնասիրությունը:

Հավելված 1.1

ԴԱՍԱՎԱՆԴՎՈՂ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐԻ (ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ) ՓԱԹԵԹՆԵՐ

Փաթեթ 1.

N	Դասիչ	Անվանում	Ժ/ք
1.	I-Q-009-21	Փորձագիտական գործունեությունը և դատական փորձաքննությունների ժամանակակից հնարավորությունները	8
2.	I-Q-042-21	Քրեական գործերով ՄԻԵԴ իրավական դիրքորոշումների կիրառման արդի հարցեր	6
3.	I-Q-077-21	Կոռուպցիոն բնույթի ֆինանսական հանցագործություններ և անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ պայքարը	8
4.	I-Q-081-21	Հարցաքննության մեթոդները և հաղորդակցության կառավարումը	8

Փաթեթ 2.

N	Դասիչ	Անվանում	Ժ/ք
1.	I-J-031-21	Հայաստանում կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելում ու դրա դեմ պայքար	6
2.	I-Q-030-21	Կիբեռհանցագործությունների որակումն ու քննության առանձնահատկությունները	8
3.	I-Q-074-21	Կալանք և այլընտրանքային խափանման միջոցներ	8
4.	I-Q-086-21	Քրեական ենթամշակույթին առնչվող արարքների որակման հիմնահարցերը և դրանց վերաբերյալ գործերի քննության մեթոդիկան	4
5.	I-Q-090-21	Խաղաղության և մարդկության անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների որակման և քննության առանձնահատկությունները	4

Փաթեթ 3.

N	Դասիչ	Անվանում	Ժ/ք
1.	I-Q-028-21	Զինվորական ենթակայության կարգի և զինծառայողների կանոնագրքային փոխհարաբերությունների դեմ ուղղված հանցագործությունների որակումը և քննության առանձնահատկությունները	10
2.	I-Q-073-21	Ներքին ուսումնասիրություններ (քննություն)	8
3.	I-Q-090-21	Խաղաղության և մարդկության անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների որակման և քննության	4

		առանձնահատկությունները	
4.	I-Q-082-21	Զինված ուժերում խոշտանգումների, վատ վերաբերմունքի և մահվան դեպքերի արդյունավետ քննությունը	8

Փաթեթ 4.

N	Դասիչ	Անվանում	Ժ/ք
1.	I-Q-042-21	Քրեական գործերով ՄԻԵԴ իրավական դիրքորոշումների կիրառման արդի հարցեր	6
2.	I-Q-076-21	Անչափահաս կամ փոքրամասնության խմբին պատկանող իրավախախտների իրավունքների պաշտպանությունը	8
3.	I-Q-071-21	Կոռուպցիոն դեպքերի քննությունը	8
4.	I-Q-083-21	Սեփականության և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների քննության մեթոդիկան	8

Փաթեթ 5.

N	Դասիչ	Անվանում	Ժ/ք
1.	I-Q-078-21	Մտավոր սեփականության դեմ ուղղված հանցագործությունների քննությունը և դրանց դեմ պայքարը	6
2.	I-Q-079-21	Երեխայի նկատմամբ բռնության բնութագիրը և քննության առանձնահատկությունները	4
3.	I-Q-030-21	Էլեկտրոնային ապացույցների կիրառման հիմնախնդիրները քրեական դատավարությունում	8
4.	I-Q-085-21	Հանցագործությունների քննության տակտիկայի և մեթոդիկայի ընդհանուր դրույթները	6
5.	I-Q-084-21	Թմրանյութերի ապօրինի շրջանառության վերաբերյալ գործերի քննության մեթոդիկան	6

Փաթեթ 6.

N	Դասիչ	Անվանում	Ժ/ք
1.	I-Q-081-21	Հարցաքննության մեթոդները և հաղորդակցության կառավարումը	8
3.	I-Q-086-21	Քրեական ենթամշակույթին առնչվող արարքների որակման հիմնահարցերը և դրանց վերաբերյալ գործերի քննության մեթոդիկան	4
4.	I-Q-082-21	Զինված ուժերում խոշտանգումների, վատ վերաբերմունքի և մահվան դեպքերի արդյունավետ քննությունը	8
5.	I-Q-085-21	Հանցագործությունների քննության տակտիկայի և մեթոդիկայի ընդհանուր դրույթները	6
6.	I-Q-090-21	Խաղաղության և մարդկության անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների որակման և քննության	4

		առանձնահատկությունները	

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՈՒՄ ԻՆՔՆԱՎԱՐ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ԹԵԿՆԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն ուսուցման ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) ներառում է Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեում (այսուհետ՝ Կոմիտե) ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց (այսուհետ՝ քննիչների) թեկնածությունների 2021թ. ցուցակում ընդգրկված անձանց(այսուհետ՝ Ունկնդիր) մասնագիտական պատրաստման կրթական չափորոշիչները, ուսուցման ձևը, ուսումնառության ժամաքանակը և ժամանակացույցը, ինչպես նաև դասավանդվող առարկայական կուրսերի համառոտ նկարագիրը:

2. Ծրագիրը մշակվել է Կոմիտեի նախագահի 2021 թվականի մարտի 2-ի թիվ 9-Լ հրամանի հիման վրա:

3. Ծրագիրը նպատակաուղղված է Ունկնդիրների մոտ քննիչի պաշտոնում գործելու համար անհրաժեշտ կարողությունների, հմտությունների ձևավորմանը, մասնագիտական գիտելիքների ծավալի ընդլայնմանը: Մասնագիտական պատրաստման գործընթացը նպատակաուղղված է ՀՀ քրեական իրավունքի արդի հարցերի, ՀՀ քրեական դատավարության արդի հարցերի, կրիմինալիստիկական տակտիկայի և մեթոդիկայի, փորձաքննությունների արդի հնարավորությունների վերաբերյալ Ունկնդիրների գիտելիքների ծավալի ընդլայնմանը և կարողությունների ու հմտությունների ձևավորմանը:

4. Ծրագիրն իրականացվում է առկա ուսուցման ձևով՝ լսարանային ուսուցման և փորձաշրջանի եղանակներով:

5. Ծրագիրն իրականացվում է երկու խմբով: Յուրաքանչյուր խմբի դասընթացների ընդհանուր ժամաքանակը սահմանվում է 100 ակադեմիական ժամ և 6 ակադեմիական ժամ քննաշրջանի համար: Ուսումնառությունն առավելապես իրականացվում է դասավանդման ինտերակտիվ մեթոդներով:

6. Փորձաշրջանը կազմակերպվում է անհատական ծրագրին համապատասխան, որում ընդգրկվում են փորձաշրջանի ընթացքում պարտադիր կատարման ենթակա առաջադրանքներ: Փորձաշրջանի ընդհանուր տևողությունը 3 ամիս է: Փորձաշրջանի ավարտին յուրաքանչյուր ունկնդիր գնահատվում է դրական կամ բացասական:

7. Ուսումնառության ընդհանուր տևողությունը Ծրագրով սահմանված ուսումնառության ժամանակացույցի համաձայն սահմանվում է հետևյալ կերպ. 1-ին խումբը՝ 2021 թվականի մայիսի 10-ից սեպտեմբերի 14-ը, 2-րդ խումբը՝ մայիսի 31-ից հոկտեմբերի 5-ը:

I. ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Խումբ I

	Դասընթացների ժամաքանակ	**Քննաշրջանի ժամաքանակ**	**Փորձաշրջանի տևողություն**	**Ընդհանուր ժամաքանակ (տևողություն)**
Ուսուցման 1-ին հատված (մայիսի 10 – հունիսի 11)	**100 ժամ** (4 դասընթաց) (մայիսի 10 – մայիսի 28)	**6 ժամ** (2 քննություն) (մայիսի 31 – հունիսի 11)		**106 ժամ**

Ուսուցման 2-րդ հատված (հունիսի 14 – սեպտեմբերի 14)			**3 ամիս** (հունիսի 14 – սեպտեմբերի 14)	**3 ամիս**
ԸՆԴՀԱՆՈՒՐ	**100 ժամ**	**6 ժամ**	**3 ամիս**	**106 ժամ և 3 ամիս**

Խումբ II

	Դասընթացների ժամաքանակ	**Քննաշրջանի ժամաքանակ**	**Փորձաշրջանի տևողություն**	**Ընդհանուր ժամաքանակ (տևողություն)**
Ուսուցման 1-ին հատված (մայիսի 31 – հուլիսի 2)	**100 ժամ** (4 դասընթաց) (մայիսի 31 – հունիսի 18)	**6 ժամ** (2 քննություն) (հունիսի 21 – հուլիսի 2)		**106 ժամ**
Ուսուցման 2-րդ հատված (հուլիսի 5 – հոկտեմբերի 5)			**3 ամիս** (հուլիսի 5 – հոկտեմբերի 5)	**3 ամիս**
ԸՆԴՀԱՆՈՒՐ	**100 ժամ**	**6 ժամ**	**3 ամիս**	**106 ժամ և 3 ամիս**

II. ԴԱՍԱՎԱՆԴՎՈՂ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐԻ (ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ) ՑԱՆԿ

N	Դասիչ	Անվանում	ժ/ք
1.	IC-J-009-21	Փորձագիտական գործունեությունը և դատական փորձաքննությունների ժամանակակից հնարավորությունները	20
2.	IC-Q-003-21	ՀՀ քրեական դատավարության արդի հարցեր	20
3.	IC-Q-043-21	ՀՀ քրեական իրավունքի արդի հարցեր	30
4.	IC-Q-052-21	Կրիմինալիստիկական տակտիկա և մեթոդիկա	30

IV. ԴԱՍԱՎԱՆԴՎՈՂ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐԻ (ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ) ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ

1. IC-J-009-21. Փորձագիտական գործունեությունը և դատական փորձաքննությունների ժամանակակից հնարավորությունները

Դասընթացը պայմանավորված է փորձագիտական գործունեության և փորձաքննությունների վերաբերյալ գիտելիքների ծավալի ընդլայնման, համարժեք և արդյունավետ փարձաքննությունների նշանակման կարողությունների ձևավորման անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է՝

- դատական փորձաքննության տեսական-իրավական հիմնախնդիրները,
- փորձագիտական գործունեությունը և դրա առանձնահատկությունները,
- քրեական վարույթում փորձաքննությունների (դատական հետքաբանություն, պայթյունատեխնիկական, դատաբժշկական, դատահոգեբանական, դատահոգեբուժական,

նյութագիտական, դատաձեռագրաբանական, դատաձգաբանական, դատահամակարգչա-տեխնիկական և այլ) ժամանակակից հնարավորությունները, դրանց նշանակման հիմքերի, կարգի, բովանդակության, փորձաքննությունների կատարման և արդյունքների գնահատման վերաբերյալ հիմնահարցերը:

Գնահատումն իրականացվում է բանավոր եղանակով՝ IC-Q-052-21 դասընթացի հետ համատեղ:

2. IC-Q-003-21. ՀՀ քրեական դատավարության արդի հարցեր

Դասընթացն անհրաժեշտ է քրեական դատավարության ոլորտում նոր իրավական զարգացումները մատուցելու, ՀՀ մասնակցությամբ միջազգային պայմանագրերի կիրառման գործնական հարցերի, վիճահարույց հարցերի շուրջ ՀՀ սահմանադրական դատարանի և ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումների, ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծում սահմանված իրավակարգավորումների էության և տրամաբանության վերաբերյալ գիտելիքներ հաղորդելու, ինչպես նաև դրանք գործնականում կիրառելու կարողություններ ձևավորելու համար:

Դասընթացը ներառում է՝

- քրեական գործի հարուցումը, քրեական հետապնդումը և դրա տեսակները,
- քրեական գործով վարույթի կասեցումը, կարճումը և քրեական հետապնդումը դադարեցնելը,
- ապացույցների հասկացությունը և տեսակները, ապացուցումը քրեական դատավարությունում,
- ՕՀԳ արդյունքների օգտագործումը որպես ապացույց,
- քննչական ենթակայության հիմնախնդիրները ՀՀ քրեական դատավարությունում,
- ձերբակալումը, ձերբակալված անձի իրավական կարգավիճակը,
- կալանավորումը և խափանման այլ միջոցները,
- առանձին քննչական գործողությունների դատավարական առանձնահատկությունները,
- քաղաքացիական հայցը քրեական դատավարությունում.
- դատական վերահսկողությունը մինչդատական վարույթում.
- մեղադրական եզրակացություն կազմելը և գործը դատարան ուղարկելը,
- **քրեական գործերով իրավական օգնությունը,**
- անչափահասների մասնակցությամբ իրականացվող քրեական վարույթի առանձնահատկությունները,
- **բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու մինչդատական վարույթը:**

Դասընթացի շրջանակում բարձրացված հարցերը կքննարկվեն նաև «ՀՀ քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի և ՀՀ քննչական կոմիտեի ներքին իրավական ակտերի համատեքստում:

Գնահատումն իրականացվում է բանավոր եղանակով՝ IC-Q-043-21 դասընթացի հետ համատեղ:

3. IC-Q-043-21. ՀՀ քրեական իրավունքի արդի հարցեր

Դասընթացը անհրաժեշտ է քրեական իրավունքի ոլորտում իրականացված և իրականացվող բարեփոխումների, վիճահարույց հարցերի շուրջ ՀՀ սահմանադրական դատարանի և ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումների վերաբերյալ գիտելիքներ հաղորդելու, ինչպես նաև դրանք գործնականում կիրառելու կարողություններ ձևավորելու համար:

Դասընթացը ներառում է՝

- հանցագործության փուլերի որակման հիմնահարցերը,
- հանցակցությունը, որակման առանձնահատկությունները,
- սպանությունների քրեաիրավական բնութագիրը և որակման առանձնահատկությունները,
- հափշտակությունների որակման առանձնահատկությունները,

• զինվորական ենթակայության կարգի և զինծառայողների կանոնագրքային փոխ-հարաբերությունների դեմ ուղղված հանցագործությունների քրեաիրավական խնդիրները,

• մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների և ազատությունների դեմ ուղղված հանցագործությունների որակման առանձնահատկությունները,

• ընտանիքի և երեխայի շահերի դեմ ուղղված հանցագործությունների որակման առանձնահատկությունները,

• թմրամիջոցների կամ հոգեներգործուն նյութերի ապօրինի շրջանառության վերաբերյալ հանցագործությունների որակման առանձնահատկությունները,

• կիբեռհանցագործությունների որակման առանձնահատկությունները,

• քրեական ենթամշակույթին առնչվող արարքների որակման հիմնահարցերը.

• խաղաղության և մարդկության անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների որակման հիմնահարցերը.

• ՀՀ ստանձնած միջազգային պարտավորությունների բովանդակությունը (այդ թվում՝ Միավորված ազգերի կազմակերպության Մարդու իրավունքների վերաբերյալ հիմնական պայմանագրերը, դրանց կիրառման առանձնահատկությունները, ինչպես նաև «Քաղաքական և քաղաքացիական իրավունքների մասին» միջազգային դաշնագրում ամրագրված իրավունքները, ինչպես նաև դրանց ներպետական օրենսդրությունում կիրառելիության և Կամընտիր արձանագրությամբ հասանելի դարձած ընթացակարգերի հարցերը):

Դասընթացի ընթացքում բարձրացված հարցերը կքննարկվեն նաև «ՀՀ քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի և ՀՀ քննչական կոմիտեի ներքին իրավական ակտերի համատեքստում:

Գնահատումն իրականացվում է գրավոր եղանակով՝ IC-Q-003-21 դասընթացի հետ համատեղ:

4. IC-Q-052-21. Կրիմինալիստիկական տակտիկայի և մեթոդիկայի արդի հարցեր

Դասընթացը պայմանավորված է կրիմինալիստիկական տակտիկայի և մեթոդիկայի վերաբերյալ գիտելիքներ հաղորդելու և դրանք պատշաճ կենսագործելու կարողություններ ձևավորելու անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է՝

• դեպքի վայրի զննության տակտիկան,

• առանձին քննչական գործողությունների (քննչական փորձարարությունը, ճանաչման ներկայացնելը, խուզարկություն, նմուշներ ստանալը և այլն) տակտիկան,

• հարցաքննության տակտիկական մեթոդներն ու առանձնահատկությունները,

• քրեագիտական վարկածը և քննության պլանավորումը,

• հանցագործության մեխանիզմի հասկացությունը,

• քրեագիտական իդենտիֆիկացիան, հասկացությունը,

• քրեագիտական դիագնոստիկան, հասկացությունը,

• ապացույցների ամրագրման տեխնիկա-քրեագիտական մեթոդները և ձևերը,

• քրեագիտական լուսանկարահանումն ու տեսաձայնագրումը.

• առանձին հանցագործությունների քննության մեթոդիկան:

Դասընթացի շրջանակում բարձրացված հարցերը կքննարկվեն նաև «ՀՀ քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի և ՀՀ քննչական կոմիտեի ներքին իրավական ակտերի համատեքստում:

Գնահատումն իրականացվում է բանավոր եղանակով՝ IC-J-009-21 դասընթացի հետ համատեղ:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ քննչական կոմիտե ՀՀ, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն Հ/Հ 90001000145 ՀՎՀՀ 02631263 (ստորագրություն) Կ.Տ.	<<Արդարադատության ակադեմիա>> ՊՈԱԿ Հասցե՝ ք.Երևան, Փիրումյանների 9 «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ, Մաշտոց մ/ճ Հ/Հ 16043032235600 ՀՎՀՀ 00129631 Հեռ. 060 46 00 94 (ստորագրություն) Կ.Տ.

Հավելված N 2
« 10 » մայիսի 2021 թ. կնքված
«ՀՀՔԿ-ՄԱԾՁԲ-ՄՎ-21/1» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության															
հրավերով նախատեսված չափաբաժնի համար	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	80521100/1	ուսուցման ծրագրերի հետ կապված ծառայություններ					2700000	2700000	2700000	5400038	5400038	5400038	5400038	5400038	**5400038**

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ քննչական կոմիտե
ՀՀ, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն,
Հ/Հ 900011002145
ՀՎՀՀ 02631263

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
<<Արդարադատության ակադեմիա>> ՊՈԱԿ
Հասցե՝ ք.Երևան, Փիրումյանների 9
«ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ, Մաշտոց մ/ճ
Հ/Հ 16043032235600
ՀՎՎՀ 00129631
Հեռ. 060 46 00 94

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված N 2.1
« 10 » մայիսի 2021 թ. կնքված
«ՀՀԲԿ-ՄԱԾՁԲ-ՄԿ-21/1» ծածկագրով պայմանագրի

ՀԱՇՎԱՐԿ

Անվանում	Թվաքանակը	Խմբերի թիվը	մեկ խմբին ընկնող ժամերի թիվը	Օրերի թիվը	Ժամերի թիվը	Ժամավարձ	գրենական պիտույքների, կենցաղային, կոմունալ և Զում ծրագրի վճարումների հաշ. 8=սb*1, 2դ	Դիպլոմներ	Ընդհանուր ժամավարձ 11=6x7	Գրենական և այլն ընդամենը 12=2x8	Ընդամենը
1	2	3	4	5	6	7	8	10	11	12	13
Պետեր	12	1	24	3	24	5000	0		120000	0	120000
քննիչներ	233	14	30	4	420	5000	504		2100000	117432	2217432
թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց ուսուցում	60	2	100	90	200	5000	3210	120000	1000000	192600	1312600
լրացուցիչ վերապատրաստման թեկնածությունների ցուցակում ընդգրկված	37	1	50	6	50	5000	0		250000	0	250000
ԸՆԴԱՄԵՆԸ 1											3 900032

Գնահատման հանձնաժողովի անդամների վարձատրության չափը

1	2	3	4	5	6
Անվանում	քանակը գնահատող հանձնաժողովի անդամների	ունկնդիրների թիվը մեկ խմբի համար	քննությունների քանակը 2 խմբերի համար	գնահատող հանձնաժողովի յուրաքանչյուր անդամի գումարը մեկ խմբի համար	Ընդամենը u2*u4*u5
թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց ուսուցում	5	30	4	30000	600 000
ԸՆԴԱՄԵՆԸ 2					**600 000**
ԸՆԴԱՄԵՆԸ 1+2					**4 500 032**
ԱԱՀ 20%					**900 006**
ԱՄԲՈՂՋԸ					**5 400 038**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ քննչական կոմիտե
ՀՀ, ք. Երևան, Մաշտոցյանց 46/5
ՀՀ ՖՆ աշխատակազմի գլխավոր հանձնարարական վարչություն,
հ/հ 90001000246
ՀՎՀՀ 02631263

Կ.Տ. (ստորագրություն)

ԿԱՏԱՐՈՂ

<<Արդարադատության ակադեմիա>> ՊՈԱԿ
Հասցե՝ ք.Երևան, Փիրումյանների 9
«ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ, Մաշտոց մ/6
հ/հ 16043032235600
ՀՎՀՀ 00129631
Հեռ. 060 46 00 94

Կ.Տ. (ստորագրություն)

Հավելված N 3
« 10 » մայիսի 2021 թ. կնքված
«ՀՀՔԿ-ՄԱԾՁԲ-ՄՎ-21/1» ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« 10 » մայիսի 2021 թ. կնքված
«ՀՀՔԿ-ՄԱԾՁԲ-ՄԿ-21/1» ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N_____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն